ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՏ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Շնորհազարդ Կաթուղիկոսի Տանն Կիլիկիոյ Տ. Սահակայ, Կաթուղիկոսութեան Տանն Աղթամարայ, Պատրիարքութեան Ս. Երուսաղէմի, Ամենապատիւ Սրբազան Պատրիարքի հայոց Թուրքիոյ, Գերաշնորհ Արքեպիսկոպոսաց, Գերապատիւ Առաջնորդաց և Եպիսկոպոսաց, Հոգեշնորհ Փոխանորդաց, Բարձրապատիւ վարդապետաց և վանահարց, և միաբանական ուխտից, արժանապատիւ քահանայից, մաքրակենցաղ կուսանաց, շնորհունակ սարկաւագաց և դպրաց համօրէն մանկանց եկեղեցւոյ, բարեջան երեսփոխանաց և անդամոց կրթական, բարեգործական, կուլտուրական, արհեստագիտական, որբախնամ և այլ ամենայն Աստուածահաճոյ հաստատութեանց, ընկերութեանց և միութեանց, ժրաջան հոգաբարձուաց և ուսուցչաց, յոգնեռանդն վաստակաւորաց ի դրական աշխատութիւնս, ջանասէր մանկանց երկուց սեռից դպրոցաց, աշխատասէր վաճառականաց և արհեստաւորաց, քրտնաթոր երկրագործաց և չինականաց և առհասարակ ընդհանուր հաւատացելոց հայկազեան սեռի արանց և կանանց, ծերոց և տղայոց, մեծի և փոքու, ձեզ, որք ի մայրենի երկրի ընակեալք և որք ի տար աշխարհ սփռեալք սահեալք նժդեհութեամբ, և որք ի մէջ

այլալեզու և այլակրօն ազանց տարագրեալք, ողջոյն սիրոյ և խաղաղութեան հասցէ ի Միածնաէջ և փրկական Ս. Կաթուղիկէէս և ի Ս. Լուսաւորչին մերոյ Աջոյս։

Ոչ որպէս կամին մարդիկ այնպէս առնէ Տէր, այլ որպէս Ինքն կամի. և ո՞ կարէ հասու լինել անքննին խորհրդոց նորա։

Մինչ պատանի էի և ուսանէի ի պետական դպրանոցի, ձայն Տեառն կոչեաց զիս ի սպասաւորութիւն Տանն իւրոյ, քառասուն և չորք ամք են, յորմէ հետէ որպէս սպասաւոր Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ կատարէաք զպէսպէս պաշտամունս ըստ կոչմանս և ըստ աստիճանիս և արածէաք զնօտն հաւատացեալն ի մեզ։ Երկիցս հաճոյ եղև Տեառն կարգել զՄեզ աւանդապահ կարգաց և դրութեանց Ս. Եկեղեցւոյս յետ մահուան հոգելոյս և երջանկայիշատակ Հայրապետացն Տ. Տ. Մկրտչի Ա. և Մատթէոսի Բ. և մինչ կատարէաք զ'ի վերայ Մեր եղեալ զպարտիս, ըստ չափու կարեաց Մերոց, կամ եղև Տեառն յերեքտասաներորդի դեկտեմբերի անցելոյ ամի ի ձեռն Համազգական Ժողովոյն կոչել զՄեզ յԱթոռ սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի և յառաջներորդում աւուր յուլիսի ամսոյ ներկայ ամի ընկալաք զօծումն Հայրապետական ի Միածնաէջ Կաթուղիկէ Մայր Տաճարի։ Ցոնարհեալ առաջի կամաց Հօրն երկնաւորի և պատկառ կացեալ համազգային ընտրութեան, գամք ի վճարել զ'ի վերայ Մեր եղեալ զսրբազան պարտիս առ եկեղեցին Հայաստանեայց և առ ազգն հայոց։

Սարսիմք և զարհուրիմք ի յուշ ածելն եթէ քանի՞օն ծանր են պարտիք, բազմադիմի հոգք Հայրապետի ամենայն Հայոց։ Սակայն յիշելով զբանն աւետարանական, զպատուիրանն Փրկչին մերոյ, եթէ լուծն Նորա քաղցր է և բեռն փոքրոգի. նաև ունելով առաջի աչաց զի ի պաշտաման Մերում չեմք միայնակ, այլ ունիմք լծակից Մեզ զՇնորհազարդ եղբայրն Մեր զԿաթուղիկոսն Տանն Կիլիկիոյ, զամենապատիւ Պատրիարքունս Հայոց Երուսաղէմի և Կ. Պոլսոյ, զԱռաջնորդս և զսրբազումար Միաբանութիւն Մայր Աթոռոյս, զՊաշտօնատարս կրօնական, վարչական, կրթական և ամենատեսակ հաստատութեանց մերոց, քաջալերիմք և հաւատամք եթէ օգնականութեամբ եղբարց և զաւակաց Մերոց կարեմք լցուցանել զպէտս կարեաց Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ և ըստ կարողութեան Մերում սնուցանել զժողովուրդն Հայոց ի վայրի դալարուոջ և առ ջուրս հանգստեան։

Եւ արդ, զօտեպնդեալ այսուհետեւ՝ և յուսով, նախ զիմեմք առ Շնորհաշարդ եղբայրդ Մեր ի Քրիստոս սրբազան Կաթուղիկոսդ Տանն Կիլիկիոյ։ Լծակից եղբայր Մեր, տեսանեմք զտառապանս և զվիշտս հօտին հաւատացելոց ի Քեզ յերեսաց տգիտութեան, աղքատութեան և այլոց դառն հանգամանաց, որովք և Դուք տառապիք և հոգք անհնարինք ծանրանան ի վերայ Քեզ, վասնորոյ աղաչեմք զԱստուած լինել օգնական և զօրաւիդ Քեզ առ ի ամոքել զվիշտս և զտառապանս ժողովրդեան ի միխիթարութիւն Մեր, Քեզ և համօրէն ազգիս։

Սրբազնումար միաբանք Պատրիարքական Աթոռոյ Վանուցն սրբոց Յակոբեանց. տեղիդ, յորոյ վերայ կայք, սուրբ է և նուիրական, և աչք բազմաց հաւատացելոց ի ձեզ հային։ Լերուք օրինակ բարեաց և քրիստոնէական ջերմեռանդութեան ամենայն ուխտաւորաց, զի հանապազ յիշեսցեն պատկառանօք զսուրբ տեղիսդ և զմիաբանութիւնդ զօրացեալ ի հաւատս քրիստոնէականս։

Ամենապատիւ Պատրիարք Կ. Պոլսոյ, սիրելի եղբար մեր, և արժանընտիր անդամք ազգային, կրօնական, և քաղաքական ժողովոց կենդրոնական վարչութեան Հայոց Թուրքիոյ. հոգ և տառապանք մերազնէից երկրիդ բազմաթիւ են և բազմապիսի, զորս դժուարանամք թուել մի առ մի. աղօթեմք առ Աստուած տալ ձեզ զօրութիւն և զգօնութիւն ըստ տեղւոյն և հանգամանաց թեթեւացուցանել զդառնութիւն հայ ժողովրդեան երկրիդ անդատապարտ մնալով առաջի Աստուծոյ, խղճի ձերոյ և ազգի։

Առաջնորդք եկեղեցւոյ, արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք. աղաչեմք նախքան զամենայն ի միտ առնուլ զվեհութիւն պարտուց աստիճանիդ, զոր ունիք։ Գոլով գլուխ ուխտի եկեղեցւոյ վիճակիդ և տեսուչ ժողովրդեան, պարտ է ձեզ նախ առնել և ապա ուսուցանել. ցուցէք զճանապարհն արդարութեան ի ձեզ հաւատացեալ սրբազնագործ պաշտօնէից և ժողովրդեանդ, արթնութեամբ և եռանդեամբ եղերուք հետամուտ, զի եկեղեցիք, որպէս Տուն Աստուծոյ, լիցին ի վայելուչ բարեկարգութեան, անտեսութիւն եկեղեցեաց ի բարեկարգ վիճակի, կրթական հաստատութիւնք, որպէս որբան կրօնական-բարոյական դաստիարակութեան, ի վերայ բարձանց կոչման իւրեանց։ Ցուցէք ամենայն ստորագրեալ պաշտօնէից իւրաքանչիւրում զիւր պարտիս, քանզի որպէս տեսուչք թեմօրէից, զթերութեանց և զանկանոնութեանց ունիք համարս տալոյ Աստուծոյ, Մեզ և ժողովրդեան։ Որպէս զե-

կավար գործոց թեմականաց, պատուիրեմք ամենայն աչալրջութեամբ զհետ լինել, զի գործք և գործառնութիւնք կատարեսցին արդարութեամբ և փութով։ Օժանդակ եղերուք թշուառացելոց, մըխիթարիչ վշտացելոց և սատարող կարօտելոց, զի ըստ աւետարանին, որպէս շահեցուցանողք տաղանդի ի ձեզ հաւատացելոց, արժանի լինիցիք լսել. «ծառայ բարի և հաւատարիմ, քանզի ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ»։

Առ ձեզ են բանք մեր, ո՛վ քահանայք, որ յետ եպիսկոպոսաց երկրորդ էք ի մէջ ժողովրդեան. առ ձեզ զան ամենայն կարօտեալք և վշտացեալք, առ ձեզ զիմեն վասն հոգևոր գործոց և եկեղեցական սրբազան խորհրդոց, հանապազ ունիք անարգել ել և մուտս ի տուն ծխոց ձերոց և որպէս հայր հոգևոր, ի ձեզ հաւատան զգաղտնիս սրտից իւրեանց և առաջի ձեր բանան զբարոյական և զնիւթական վէրս իւրեանց, վասնորոյ յորդորեմք ձեզ մի տայք երբէք իւիք անկանիլ արատոյ ի պաշտօն ձեր, այլ արիաբար, յոժարակամ սրտիւ, առանց ծուլութեան կատարեցէք զպարտիս ձեր զատմանեալն ի սուրբ հարց՝ զժամակարգութիւնն անթերի կատարեցէք, առանին և հրապարակական քարոզութեամբ պահեցէք միշտ զգաստ զփոքրիկ հօտն ձեր ի բարեպաշտական և աստուածահաճոյ գործս. մի լիցի ձեզ խեթիւ հայել առ միմեանս և վասն տրոց կամ ընչից դժկամակութիւն սերմանել, այլ որք աւագագոյնքն են ի ձէնջ և զարգացեալք, պարտին շահել զկրտսերագոյնսն և զոկարամիտսն։ Ըստ Ներսիսի Շնորհալւոյ մի՛ ոք ի ձէնջ սիրեսցէ գոգիտութիւն ուսման յաղագս ծուլութեան կամ աշխարհական զբաղմանց, թէ և ոչ կարէ ոք ամենայնիւ կատարեալ լինել, սակայն հարկ է ի կարևորսն անթերի լինել։

Յետ հոգևոր քարոզութեանց ի ձեռն հոգևորականաց, զի կավարողք մտաց ժողովրդեան դուք էք, ով պատուական հրապարակախօսք, գրականագէտք և մատենագիրք, ի ձեզ հային ընթերցողք մատենից և լրագրաց, ի ձէնջ ակնկալեն զճշմարիտ նկարագիրս երևոյթից և զճշգրիտ բացատրութիւն նոցին, հաւատան և հետևին ամենայն ասացելոցդ։ Արդ, աղաչեմք զԱմենակարողն Աստուած, զի դուք լցեալ պայծառ իմաստութեամբ, լի ազդասիրութեամբ, լինիցիք քարոզիչք ճշմարտութեան և առաջնորդիցէք զմիտս ժողովրդեան ի բարին և ի քաղաքակրթութիւն։

Մեծատունք և աւագք, առ Ձեզ ուղղեմք զխօսս Մեր, դուք, որ ճոխացեալ էք ամենայն բարութեամբք աշխարհիս զորս հաճոյ

լեալ է Պարգևողին բարեաց տալ ձեզ առատաբար, հատուցէք աշխատասիրաց ձերոց ըստ վաստակոց իւրեանց, յիշեցէք զերանելին զՅոբ և զհայրն Աբրահամ, որք առատք էին ի տուրս, հանապազ պաշտէին զՏէր և գոհանային զՏուողէն ամենայն բարեաց: Հանէք մասն և բաժին ի գործ ժողովրդական և այդու բարեգործութեամբ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ և գանձ անպակաս յերկինս. և Երկնաւոր Հայրն ամենեցուն տեսանելով զգործս ձեր բարիս, հատուսցէ ձեզ զտասնապատիկ:

Առ ձեզ ևս ունիմք յորդոր ուսուցիչք և դաստիարակք, քանզի ի ձեզ հաւատացեալ են մատաղերամ մանկտիք ազգիս: Հայր և մայր փոյթ ունին զզարգացմանէ մարմնոյ զաւակաց իւրեանց. հոգեկան և մտաւոր զարգացումն ի ձեզ է յանձն եղեալ: Դուք էք դաստիարակք և կրթիչք, դուք էք մարզիչք նոցա ի պէսպէս գիտութիւնս և ի բարոյական կրթութիւնս: Արդ, յաւանդելն զպէսպէս գիտութիւնս, կրթեցէք զհոգի մանկանց երկիւղիւն Աստուծոյ, զի ի տղայ տիոց ընտելացեալ բարի գործոց, առ յապայն լինիցին բարի անդամք հասարակութեան: Փոյթ ունիցիք վարժել զմանկտիս երկուց սեռից ի լինել աշխատասէր ի մտաւորական պարապմունս, բարի և սիրող առ ընկերակիցս, կարգապահ և համեստ ի գնացս և ոչ միայն բանիւ բերանոյ, այլ և օրինակաւ անձի ձերոյ եղերուք դաստիարակք:

Ի գաւառս հայոց ժողովուրդն մեր գտանի յանձուկ վիճակի և խարխափի ի տգիտութեան, ոչ կարէ անթերի լցուցանել զպէտս և զկարիս ընտանեկան անհրաժեշտ պիտոյից և ոչ հոգ տանել ուսման մատաղերամ զաւակաց իւրեանց, բայց ուրախութեամբ սրտի տեսանեմք, զի օր ըստ օրէ յառաջանան և զարգանան ի տեղիս տեղիս բարեգործական, կրթական, կուլտուրական, գիւղատնտեսական և այլ ազգաշահ և օգտակար հաստատութիւնք: Արդ, օրհնեմք զվաստակս ամենայն ընկերութեանց. յորդորեմք զանդամս և զվարչութիւնս նոցին, զի լի եռանդեամբ աշխատ լիցին արդիւնաւորել զնպատակ ընկերութեանց և այդու նմանողք սամարացւոյն Աւետարանի: Եթէ ըստ բանի Փրկչին արբուցանողն բաժակի միոյ ջրոյ ոչ կորուսանէ զվարձս իւր, ապաքէն որչափ ևս առաւել դուք, որդեակք Մեր, արժանի լինելոց էք վարձուց վասն ժրաջան վաստակոցդ:

Լուարուք և դուք, ժողովուրդ երկրագործ, որ տքնիք զօրն հանապազ. ծանր են աշխատանք ձեր, սակայն օրհնեալ են վաս-

տակ ձեռաց ձերոց, որովք լցուցանէք զպէտս անհրաժեշտ կարեաց ամենեցուն։ Աղօթեմք առ ամենաբարին Աստուած պտղաբեր առնել զանդ և զանդաստան ձեր աղատ պահելով ի վնասակար պատահարաց։ Աշխատ լերուք տալ որդւոց ձերոց զուսումն և զգիտութիւն, փոյթ ունիցիք բանալ ի շէնս ձեր դպրոցս և զեղեալն բարեզարդել, քանզի զարդիս ի դժուարին պարագայս կենաց գիտութեամբ և ուսմամբ զինեալ մարդիկ միայն և եթ կեան և անկարօտ դիրս ունեն։ Սիրով, խաղաղութեամբ և համերաշխ գործակցութեամբ կարէք լինել բարեկեցիկ։

Յորդոր կարդամք առ ձեզ, դստերք մեր, տիկնայք և օրիորդք, պարկեշտութեամբ և բարեձևութեամբ կեցջիք, որպէս վայել է քրիստոնէական բարեպաշտութեան. զարդարեսջիք զանձինս ձեր ոչ ոսկւով և արծաթով, այլ ամօթխածութեամբ և առաքինի վարուք, զնեա լիջիք ի դաստիարակութիւն մանկանց, քանզի մայրն է, որ ուսուցանէ զաւակաց զառաջին բառս արտաբերել. զգուանօք և սիրով ուսուցէք զնոսա քաղցր բառբառ։

Հուսկ ուրեմն առ ձեզ դառնամք, միաբանք Ս. Էջմիածնի սննդակից եղբարք Մեր ի Քրիստոս, ցանկութիւն Մեր է տեսանել զձեզ եռանդուն յաղօթս. ողորմութեամբ և սրբութեամբ վառ պահեալ զլոյս հաւատոյ լապտերաց ըստ օրինակի իմաստուն կուսանացն։ Զինեալ առաքինութեամբ՝ սպասաւորել Սեղանոյ սրբոյ, որպէս ուխտեալ էք ի ձեռնադրութեան։ Մանաւանդ յուշ ածեմք ձեզ, զի ի պէսպէս պաշտօնս ի վիճակս, զառաջնորդութեանց ասեմք և զփոխանորդութեանց, ի ձէնջ կարգին պաշտօնեայք, ուստի պարտիք ձեր են ընտելացեալ ի կրօնաւորական կենցաղս, ի պաշտաման լինել օրինակ համեստութեան, ներողամտութեան, անյիշաչարութեան, հիւրասիրութեան և ըստ ամենայնի առաքինի վարուց. կուռ զօրութեամբ ջանալ ի շահ Ս. Կաթուղիկէ Էջմիածնի և ժողովրդեան, և աջակից Մեզ, ի կատարելն Մեր զծանր պարտիս, որք եդան ի վերայ Մեր կամօքն Աստուծոյ, ցանկութեամբ համայն ազգի Հայկազեան և միաբանական Ուխտիդ։

Իսկ Մեք, ըստ երդման մերում, զոր նախ քան զսուրբ Օծումն երդուաք առաջի Ս. Սեղանոյ Միածնէջ Տաճարիս, մնալով հաւատարիմ կարգաց և կանոնաց ի նախնեաց մերոց հաստատելոց և աւանդութեանց Ս. Առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց, ի նոյն յորդորեմք և զսիրելի զաւակունսդ։ Ծառայեսցուք Տեառն սրտի մտօք իւրաքանչիւրն ըստ աստիճանի, ըստ շնոր-

հաց և ըստ կոչմանն. վասնորոյ աղօթեմք առ Ամենաբարձրեալն Աստուած, զի զօրավիգն լիցի մեզ ամենեցուն ի կատարելն զպարտիս մեր. չլքանել ի նեղութեան և ի պատահարաց, այլ միշտ առ Աստուած յուսալ և համբերութեամբ և սիրով տանել զխաչն մեր։ Ժողովուրդ հայոց, որ չհայեցեալ ի տկարութիւն անձինս, եղեր ի վերայ Մեր զհովուապետական պարտիս, աղօթեսջիր վասն Մեր, զի Տէրն մեր Յիսուս Քրիստոս զօրավիգ լիցի Մեզ ի կրել զծանր խաչն և հաւատամք, զի լուիցէ Տէր ձայնի աղաչանացդ և պահեսցէ զՄեզ վասն Եկեղեցւոյ իւրոյ։ Ամէն։

Տուաւ կոնդակս յամի շնորհաց Փրկչին 1912, 29 սեպտեմբերի և ըստ տօմարիս ՌՃԿԲ. ի հայրապետութեան մերում Ա. ամի յԸրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի. ի Վաղարշապատ.

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ